ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,29" հունվարի 2020 թվականի N4- Ա

ՆԱԶԱՐԵԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետով, 63-րդ հոդվածով, ,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով ,հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի, ,,Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0160-0002 ծածկագրով 0,36231հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին" թիվ 43-Ա որոշումը, Շիրակամուտ համայնքի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 27-ի թիվ 1 արձանագրությունը

Որոշում եմ.

1.Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր 06-087-0160-0002 կադաստրային ծածկագրով 0,36231 հեկտար մակերեսով հողամասը 246500 (երկու հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Նազարեթ Հարությունյանին (ծնված 1980թ.):

2.Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո Նազարեթ Հարությունյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնել Նազարեթ Հարությունյանի միջոցների հաշվին:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հենրիկ Իգիթխանյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,29'' հունվարի 2020 թվականի N5-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ,գ) ենթակետով և 48-դ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի 23-րդ փողոցի վրա գտնվող 06-087-0061-0017 կադաստրային ծածկագրով 0,091 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել, << գ.Շիրակամուտ, 23-րդ փողոց , թիվ 17>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ
<<29>> հունվարի 2020թվականի N6-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Շիրակամուտի գյուղապետի 2005 թվականի հունվարի 26-ի թիվ 13 որոշման մեջ ,,Չինաշխարհիկ" անվան փոխարեն սխալմամբ գրվել է ,,Չնաշխարհիկ" `

Որոշում եմ.

1.Փոփոխություն կատարել Շիրակամուտի գյուղապետի 2005 թվականի հունվարի 26-ի թիվ 13 որոշման մեջ՝ ,,Չնաշխարհիկ" անունը փոխել ,, Չինաշխարհիկ" անունով:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան